

ԿՐՕՆ ԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ

«Աստուած ոչ զք ետես երէք» ասուած է Աւետարանում (Յով. Ա. 18)։ Սակայն բոլոր մարդիկ հաւատում են Աստուծուն։ Դեռ ևս հին յունական գրող, պատմաբան Պլուտարկոսը, որ շատ ճանապարհորդութիւններ էր արել, բազմատեսակ երկրներ և ժողովրդներ տեսել, գրում էր. «Երկեցէք ամբողջ աշխարհը և դուք կտեսնէք ամեն բանի մէջ մեծամեծ տարբերութիւն. կտեսնէք գիւղեր, որոնց մէջ գոյութիւն չունի ոչ մի օրէնք, կտեսնէք մարդիկ, որոնք չգիտեն թէ ինչ է փողը, կպատահէք քաղաքների, որոնք չունին պարիսպ, ամբողջ ցեղեր, որոնք զուրկ են բնակարանից. բայց ոչ մի տեղ չէք գտնիլ երկիր կամ ժողովուրդ, որտեղ չլինի սեղան կամ զոհարան, որտեղ չայրուին զոհեր և չվերառաքուին աղօթքներ դէպի երկինք»։

Ինչի վրայ է հիմնուած մարդկանց այդ ընդհանուր հաւատը առ Աստուած։ Նախ և առաջ մարդուս անմիջական բնազդման, բնածին կրօնական զգացման վրայ։ Մեղանից իւրաքանչիւրը ծանօթ է այն զգացմունքին, երբ մէկը մեզ վրայ անթարթ հայեացք է ձգում։ Օրին. մենք նստած ենք գրքի առաջ կամ զբաղուած ենք գործով և կամ խօսում ենք մէկի հետ, յանկարծ տիրում է մեզ մի առանձին զգացմունք։ Մենք ակամայ շուռ ենք գալիս, բարձրացնում աչքերս և տեսնում, որ մեզ վրայ անթարթ նայում են, կարծես հայեացքով ստիպում են մեզ ուշադրութիւն դարձնել իրանց վրայ։ Լինում են նաև դէպքեր, երբ կողմնակի ներկայութիւնն աւելի ևս տպաւորիչ և ազդու է լինում։ Մարդիկ, որոնք պատահմամբ մտնում են մի մեծ մութ բնակարան, վախի կամ այլ զօրեղ տպաւորութեան տակ անսխալ կերպով զգում են,

որ այդտեղ մենակ չեն, այլ՝ շնայելով տիրող լուսութեանը և միմեան, իրանց հետ կայ մէկը: Ոչ ոք չի երևում և ոչինչ չի լսում, բայց զգացւում է, որ կայ մէկը:

Այդպէս է նաև մարդկութիւնը երկրի վրայ: Մենք տեսնում ենք միայն մեզ շրջապատող աշխարհը, բայց սրտով զգում ենք որ կայ Մէկը աշխարհից բարձր, որ մենք այնտեղ երկրի վրայ մենակ չենք, որ մեզ ուղղուած է հեռուից մէկի անթարթ հայեացքը և մարդիկ նայում են իրանց շուրջը, փնտրում անտեսանելի, բայց զգացուող էութեանը:

Աշխարհի ուսումնասիրութիւնը, շրջապատող բնութեան հետ ծանօթութիւնը աւելի ևս համոզում են մարդուն, որ եթէ կայ այս զարմանալի իմաստութեամբ ստեղծուած աշխարհը, կայ և նա, Որ այդ բոլորը ստեղծել է: Սովորաբար տիրում է այն կարծիքը, որ գիտութիւնը, բնութեան ուսումնասիրութիւնը և առհասարակ մարդկային զարգացած բանականութիւնը քանդում, արմատահան են անում հաւատը: Դա՛ մեծ սխալ է:

Ճշմարիտ լուսաւորուած բանականութիւնը հաւատի թշնամի չէ, այլ նրա նեցուկն է և լուսատուն: Վերջրէք հաւատից բանականութիւնը և նա կկորցնէ իւր բարձրագոյն գինը, կդառնայ կոյր հաւատ և նա այնուհետև կլինի նախապաշարում և ոչ հաւատ: Հաւատը առ Աստուած կարող է ժխտել միմիայն մակերևոյթային, թերի կրթութիւնը, որ շրթունքը կպցնելով գիտութեան բաժակի եզերքին, անձնապատանութեամբ լցուած կարծում է, իրան համար ամեն ինչ սլարդ է, մատչելի և իմանալի: Իսկ ճշմարիտ լուսաւորութիւնը, որ հիմնուած է երկնքի և երկրի գաղտնիքները ուսումնասիրելու, բնութեան օրէնքները լուսաբանելու վրայ, անխուսափելի կերպով մարդուս տանում է առ Աստուած: Աստուածային գրքի անբովանդակելի գրքի ուսումնասիրութիւնը, որի անունն է տիեզերք, հարկադրում է մեծագոյն գիտնականներին այդ գրքի ամեն մի թերթի, ամեն մի տողի, երկնային մարմինների շարժողութեան, ամենաշնչին բզէզի կեանքի մէջ

պարզ կերպով տեսնել Արարչի գծագրուած անունը:

Անգլիայի յայտնի գիտնական և մեծ իմաստասէր Բէկոնը, փորձնական գիտութեան հայրը, ասում է որ իսկական գիտութեան և փիլիսոփայութեան ջանքը պէտք է լինի ձգտել, որ մարդկութիւնը երբ և իցէ կատարեալ հասկացողութիւն կազմի Աստուծոյ մասին: Եւ այդ նպատակին հասնելու լաւագոյն միջոցն է Ս. Գրքից յետոյ աշխարհի փորձնական ուսումնասիրութիւնը. Բէկոնի այդ խօսքերը ամեն մի լուրջ մտածողի համար այնքան աւելի արժէք ունեն, որքան խոր է նրա միտքը և լայն հայեացքը:

Առէք, օրինակ, Նիւտոնին, որը բացատրել է տիեզերքի բոլոր աշխարհների շարժման օրէնքները: Ուրիշ մեծամեծ գիտնականներ խօսք չեն գտնում նրան գովաբանելու համար, իսկ Մեծ Նիւտոնը իւր մասին այպէս է ասում.

«Զգիտեմ թէ ինչպէս եմ երևում ես աշխարհին, բայց ինքս ինձ երևակայում եմ մի երեխայ, որ խաղում է ծովի ավին և հաւաքում մանր քարեր և խեցիկներ, մինչդեռ ահագին ովկիանոսը խորապէս ծածկում է ճշմարտութիւնը նրա աչքից»: Այսպէս համեստ էր դատում նա, մտքի և գիտութեան մեծ հանճարը, իւր մասին, իսկ Աստուածութեանը, ընդհակառակը, վերաբերում էր այնպիսի ջերմեռանդութեամբ, որ նոյն իսկ փողոցում ծածկած գլխով չէր արտասանում Աստուծոյ անունը:

Հռչակաւոր մատեմատիկոս և բնագէտ Ամպերը իւր նամակներից մէկում այսպիսի խորհուրդ է տալիս մի երիտասարդ գիտնականի. «Զգոյշ կաց բացառապէս գիտութեամբ պարապելուց, ինչպէս անում էիր առաջ: Սուփորի, հետազօտիւր երկիրը, այդ է գիտութեան մարդու պարտականութիւնը, բայց տեսանելի աշխարհի վրայ նախիր մի աչքով միայն, իսկ միւսը անընդհատ ուղղիր դէպի յաւիտենական լոյսը: Մի ձեռով քննիր երկիրը, իսկ միւսով բռնիր Աստուծոյ քղանցքից, ինչպէս օրդին բռնում է հօր փեշից:

Նիւտոնի, Կեպլերի, Գալիլէյի, Ամպերի, Լիբեիւի, Պասմերի և այլ շատ մեծամեծ մտքի և գիտութեան աստղերի օրինակները պարզ կերպով ցոյց են տալիս, որ անաստուածութիւն սովորեցնում է միմիայն գիտնական մեծամտութիւնը, իսկ լուրջ ուսումը, ճշմարիտ գիտութիւնը միշտ տանում են մարդուն գէպի Աստուած։ Սակայն զգալով, ապացուցանելով հանդերձ Աստուծոյ գոյութիւնը՝ մարդուս սիրտն ու միտքը դրանից գէնը չեն կարող անցնել, նրանք չեն կարող լուծել Աստուծոյ գոյութեան գաղտնիքը։ Աստուծուն հասկանալու կարողութիւնը չէ տրուած մարդուն։ Աստուածայինը գիտէ միայն Աստուած, իսկ մարդս կարող է գիտենալ միայն մարդկայինը։

Քրիստոսի ծննդից շատ առաջ Սիկիլիայում ապրում էր մի թագաւոր անունը Գիերօն։ Նա իւր պալատում պահում էր շատ իմաստուններ, որոնց մէջ մանաւանդ աչքի էր ընկնում մէկը՝ Սիմօնեդ անունով։ Մի անգամ Գիերօնը կանչեց նրան իւր մօտ և ասաց.

— Սիմօնեդ, դու շատ ծառայութիւն ես մատուցել ինձ, ինչ հարցով որ գիմել եմ քեզ միշտ իմաստուն խորհուրդ ես տուել և ամեն բան պարզել։ Լարիր իմաստութիւնդ, բացատրիր ինձ՝ ինչ է Աստուած։

— Դժուար հարց ես առաջարկում, արքայ, ասաց Սիմօնեդը. դրան իսկոյն չի կարելի պատասխանել, տո՛ւր ինձ մի-երկու օր մտածելու ժամանակ։

— Լա՛ւ, համաձայնեց թագաւորը.

Անցաւ երկու օր. Սիմօնեդը եկաւ թագաւորի մօտ, Գիերօնը սպասում է բացատրութեան, բայց իմաստունը պատասխանի փոխարէն էլի չորս օր ժամանակ է խնդրում մտածելու։

— Ծանր խնդիր է, ասում է Սիմօնեդը։

— Գիտեմ որ ծանր է, պատասխանում է Գիերօնը, հէնց դրա համար էլ դիմում եմ քեզ, թէ չէ ուրիշին կխնդրէի պատասխանել. դնա՛, մտածիր.

Անցաւ էլի չորս օր. Սիմօնեդը դարձեալ ժամանակ է խնդրում. — թոյլ տուր էլի ութն օր, արքայ։

Գիերօնը յօնքերը կիտեց.

— Հանաք ես անում, Սիմօնդ, առաջ խնդրեցիր երկու օր, յետոյ չորս, հիմա ութը. կանցնեն այդ օրերը, երևի կխնդրես տասն և վեց օր, ապա երեսներկու օր ևլն. եթէ այդպէս է ուրեմն երբ պէտք է պատասխան տաս:

— Դու հասկացար, արքայ, հանդարտ կերպով ասաց Սիմօնդը. անցնէր ութը օր, ես պիտի խնդրէի տասնևվեց, յետոյ երեսներկու և այդպէս շարունակաբար կրկնապատկելով անվերջ. ինչ վերաբերում է պատասխանին, ինձ թւում է որ ես տուել եմ արդէն:

— Ինչպէս թէ տուել ես. դարմացաւ Գիերօնը, դու դեռ ևս Աստուծոյ մասին ոչինչ չես ասել, այլ միայն ժամանակ ես խնդրել մտածելու:

— Հէնց այդ է և իմ պատասխանը, ասաց Սիմօնդը. Քո հարցին ոչ մի իմաստուն չի կարող պատասխանել: Ո՛րքան աւելի մտածես այդ մասին, այնքան քիչ կհասկանաս, ստիպուած կլինես միշտ ժամանակ խնդրելու: Այդ հարցը սարի նման բան է. հեռուից նայում ես, երևում է շատ մեծ. իսկ ճիշդան մօտենում ես, այնքան աւելի և աւելի մեծանում է և բարձրանում և դու նրա առաջ զգում ես քեզ այնպէս փոքր, խեղճ, ոչինչ: Իսկ եթէ սարը չես կարող գրկել, կամ ձեռքով ծածկել, հապա ինչպէս ես ուզում, արքայ, մտքով գրկել նրան, Որը Ստեղծել է և մարդուն և սարը:

Գիերօնը հասկացաւ Սիմօնդի խօսքերը, շերտեռանդութեամբ բարձրացրեց աչքերը երկինք և ասաց.

— «Այո, Աստուած անիմանալի է և անհասանելի»:

Յկեղեցական գրող, երանելի Օգոստինոսը, իւր մասին նոյնպիսի մի դէպք է պատմում: Նա շատ շարադրութիւններ է գրել քրիստոնէական կեանքի և հաւատի բացատրութեան վերաբերեալ և մտածել էր Աստուծոյ մասին ևս մի գիրք գրել: Սկսեց գործը, առաւօտից նստեց սեղանի առաջ, գրեց «Աստուծոյ մասին» խորագիրը և սկսեց մտածել թէ ինչպէս կարելի է մարդկանց հասկացնել թէ ինչ է Աստուած: Շատ երկար և լարուած

մտածեց նա, բայց ոչինչ դուրս չեկաւ: Օգոստինոսը յոգ-
նեց երկար մտածելուց: Գլուխը ցաւեց՝ քնաց ծովի ափը
թարմանալու: Գնում է աւազի վրայով, մտածում է իւր
խնդրի մասին և տեսնում է մի երեխայ, որ կոտրած
փարչով ծովից ջուր է բերում և լցնում փոքրիկ փոսի մէջ:

— Ի՞նչ ես անում այստեղ, սիրելի երեխայ, հարցրեց
Օգոստինոսը:

— Փոս եմ փորել և ուզում եմ ծովի բոլոր ջուրը
լցնել այստեղ, պատասխանեց երեխան շարունակելով
գործը:

Օգոստինոսը ժպտաց և առաջ գնալով ասաց ինքն
իրան:

— Որքան պարզամիտ են լինում երեխաները. որքան
քիչ բան են հասկանում. օրինակ այս երեխան ուզում է
կոտրած փարչի կտորով ծովի բոլոր ջուրը լցնել փոքրիկ
փոսի մէջ:

Օգոստինոսի միտքը կրկին վերադարձաւ իւր նախկին
խնդրին և ուշքը գլխին հաւաքելով ասաց:

— Մի՞թէ ես էլ նոյն երեխան չեմ. իմ թոյլ խելքով
ուզում եմ ըմբռնել և ուրիշի առաջ բաց անել Աստուծոյ
յաւիտենական գոյութեան էութիւնը: Ի՞նչպէս կարող է
փոքրը պարփակել Մեծին և այդ փոքրի համար բաւական
է և այն, որ խոնարհի մեծի առաջ, ինքն իրան յանձնի
Նրա կամքին, աշխատի ճանաչել և կեանքի մէջ կատարել
այդ կամքը:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ

1846 թուականին գտնուեցաւ Նեպտուն մոլորակը:
Այս մոլորակի գիւտը կատարուեցաւ անսովոր կերպով՝
գիտնականի առանձնասենեակում, դրասեղանի մօտ:
Դրանից 25 տարի առաջ գիտում էին մի ուրիշ մոլորակ՝
Ուրան: Նրա շարժման ճանապարհը հաշուի առնելով՝ հե-